Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՊՈՆՏՈՍԻ ԱՐՔԱՅԱԿԱՆ ԵՎ ԳՈՒԳԱՐՔԻ ԲԴԵՇԽԱԿԱՆ ՏՈՀՄԵՐԻ ԱԶԳԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Աքեմենյան տերության սահմանը Կովկասում հասնում էր մինչև Կովկասյան գլխավոր լեռնաշղթա: Հերոդոտոսի վկայությամբ «մինչև այդ լեռը տիրում են պարսիկները, իսկ Կովկասից հյուսիս (ընկած երկիրը) հաշվի չի առնում պարսիկներին»:[1] Աքեմենյան աշխարհակալության համար կենսական անհրաժեշտություն էր ներկայացնում Կովկասյան գլխավոր լեռնաշղթայի լեռնանցքների հսկողությունը, որպեսզի թույլ չտրվի «պարսիկներին հաշվի չառնող» սարմատական և լեռնցի բարբարոս ցեղերի մուտքը աշխարհակալության մեջ մտնող երկրներ: Այդ պատասխանատու գործի իրականացումը պետք է դրված լիներ տեղական սատրապների վրա: Դարիալի լեռնանցքի գոտում դա իրականացնելու էր Հայաստանի սատրապը, իսկ Դերբենդի լեռնանցքի գոտում՝ Մարաստանի սատրապը:

Աքեմենյան աշխարհակալության փլուզման ժամանակ Մարաստանի սատրապն էր Ատրպատը (Ատրոպատես), որը մ.թ.ա. 331թ. Գավգամելայի ճակատամարտին մակեդոնացիների դեմ հանել էր ո՛չ միայն իր մարերին (մեդացիներին): Արիանոսի վկայությամբ, «Մեդացիներին առաջնորդում էր Ատրոպատեսը, և մեդացիների հետ մարտակարգով շարված են եղել կադուսիները, աղվանները և շակաշենցիները (Σακεσίνοι)»[2]: Արիանոսի մեկ ուրիշ վկայության մեջ ևս այս ցեղերի ներկայացուցիչները հիշատակվում են աքեմենյան բանակի շարքերում[3], այսինքն, հաստատվում է այդ ցեղերի Աքեմենյաններին հպատակները լինելու փաստը: Աքեմենյան աշխարհակալության կործանումից հետո այդ ցեղերը մնացին Ատրպատի ստեղծած Ատրպատական-Մարաստանի թագավորության տիրապետության տակ, որի թագավորն էլ պետք է իրականացներ Դերբենդի լեռնանցքի գոտու հսկողությունը:

Դարիալի լեռնանցքի գոտու հսկողությունը իրականացրած Հայաստանի սատրապ Երվանդը (Օրոնտես) այդ գործը շարունակել էր նաև Աքեմենյան աշխարհակալության կործանումից հետո, երբ իրեն անկախ թագավոր էր հռչակել[4]: Նա պատմական նախատիպերից մեկն է խորենացիական Վաղարշակ (Անանուն պատմիչի երկում՝ Արշակ) թագավորի, որին են մեր պատմիչները վերագրում Հայաստանի հյուսիսային կողմնակալության ստեղծումը[5]: Այդ կողմնակալությունը բուն հայկական տարածքներից բացի ներառում էր նաև Կուր գետի և Կովկասյան գլխավոր լեռնաշղթայի միջև ձգված տարածքը՝ Դարիալի լեռնանցքի գոտին ներառյալ: Այստեղ էլ որոշ ժամանակ անց ստեղծվել էր վրացական անկախ թագավորությունը՝ կոչված *Քարթլի, Վիրք, Իբերիա*: Ըստ «Վրաց դարձը» միջնադարյան երկի, Վրաց թագավորության հիմնադիր Փառնավազից առաջ այստեղ իշխում էր Արիան-Քարթլի կոչված օտար երկրի արքայազն Ազոն, որին «Թագավորների մասին պատմության» հեղինակ Լեոնտի Մրովելին համարում է մակեդոնացի՝ կառավարիչ նշանակված Ալեքսանդր Մակեդոնացու կողմից: Ազոյի դեմ ապստամբած և մարտում նրան սպանած Փառնավազը համարվել է Մցխեթի հին իշխողներից վերջինի զարմիկը: Նրա դաշնակիցներն են եղել

---

[1] *H e r o d., III, 97 (Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմանությունը Ս. Կրկյաշարյանի, Եր., 1986, էջ 198):*

[2] *A r r i a n, III, 8, 4 (Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. I, Եր., 1944, էջ 105: Ալեքսանդր Մակեդոնացի, Եր., 1987, էջ 97):*

[3] *Arrian, III, 11, 4 (Ալեքսանդր Մակեդոնացի, էջ 101):*

[4] *Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. I, Եր., 1971, էջ 505-506:*

[5] *Մովսիսի Խորենացւոյ պատմութիւն Հայոց, Եր., 1981, Բ, ը, Բ, ժա (այսուհետև՝ Մ. Խորենացի): Լ. Պետրոսյան, Ավանդական Վաղարշակի պատմական ու միֆական նախատիպերի շուրջ, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», V, Գյումրի, 2002, էջ 136-142: Նույնի՝ Հայաստանի հյուսիսային կողմնակալությունը ըստ հայ և օտար աղբյուրների, ԳՊՄԻ հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր (նվիրվում է Հայոց գրերի գյուտի 1600-ամյակին), Գյումրի, 2005, էջ 100-103:*

հյուսիսկովկասյան ցեղերը, Էգրիսիի (Արևմտյան Վրաստան) կառավարիչ Կուջին և Ասորիքստանի թագավորը՝ հանձին որի, ըստ երևույթին, հասկանալու ենք Ասորիք-Ասորեստանի տիրակալ, Սելևկյան Անտիոքոս 1-ինին (մ.թ.ա. 281-261թթ.):

Այս իրադարձությունները ներկայացնող վկայությունների վերաբերյալ վրացի պատմաբան Ն. Լոմուրին գրում է. «Չնայած որոշ լեգենդար մանրամասներին (օր., Ալեքսանդրի արշավանքը Քարթլի), այդ վկայությունները պարունակում են մի շարք կոնկրետ ցուցումներ իր՝ Փառնավազի, գործունեության մասին, նրա փոխհարաբերությունների մասին դիադոքոսների (Անտիոքոս 1-ին, Լիսիմաքոս) հետ և այնքան ճիշտ են արտացոլում ընդհանուր պատմական վիճակը, որ հազիվ թե այդ ամբողջ պատմվածքը կարելի է համարել լեգենդ»[6]: Նման կարծիքներ ավելի վաղ արտահայտել էին նաև Գ. Մելիքիշվիլին[7], Ա.Ի. Բոլտունովան[8] և ուրիշներ:[9] Ն. Լոմուրին կարծում է նաև, որ Ազոյի և Փառնավազի միջև մղված պայքարը եղել է ներքին պայքար՝ մի կողմից վրացական Մցխեթա-Քարթլիի (Փառնավազի գլխավորած կենտրոնական), իսկ մյուս կողմից Արիան-Քարթլիի (Ազոյի գլխավորած սասպեյրական - հարավարևմտյան) պետական կազմավորումների միջև:[10] «Հին աշխարհի պատմության» ռուսերեն ակադեմիական հրատարակության II հատորի հեղինակները նշում են, որ Արիան-Քարթլիի թագավորի որդի Ազոն երբ համարվում է Ալեքսանդր Մակեդոնացու մտերիմը՝ «պատմականորեն կատարելապես անհավատալի է»,[11] բայց Ն. Լոմուրիի նման, նրանք ևս Արիան-Քարթլին որոնում են Հայկական լեռնաշխարհում, աքեմենյան XVIII սատրապությունում, որտեղ, նրանց կարծիքով ևս, իբր թե բնակվում էր «արևելյան նախավրացական» սասպեյրների ցեղը»:[12] Բայց իզուր է Արիան-Քարթլին փնտրվում Հայկական լեռնաշխարհում, որովհետև այդ երկրանվան *Արիան* բաղադրիչը հստակ կերպով մատնացույց է անում Իրանը, որի ժամանակակից անվան հիմքում ընկած է հնագույն իրանական *Արիանա* ձևը: Ընդ որում, Փառնավազին նախորդած կառավարիչի իրանական ծագման իրողությունը հաստատվում է նաև Մ. Խորենացու Մար Աբասին հանգող այն վկայությունների օգնությամբ, որոնցում ևս հիշատակվում է Ալեքսանդր Մակեդոնացին:

Մեր պատմահոր երկում կարդում ենք, որ Հայոց Վաղարշակ արքան «Կովկաս լեռան դեմ հյուսիսի կողմնակալ է նշանակում մեծ և հզոր ցեղը և նահապետության անունը դնում է Գուգարացոց բդեշխ, որ Դարեհի Միհրդատ նախարարի սերնդից էր, որին Ալեքսանդրը բերելով իշխան նշանակեց Իվերիացոց ցեղից գերիների վրա...»:[13] Գրաբար բնագրի այս գլխում անանուն մնացած նորանշանակ կողմնակալը ոչ թե Միհրդատի «սերնդից» է, այլ նրա որդին՝ «ի զտակէ Միհրդատայ» (*զտակ*-ը նախ և առաջ «ծնունդ» ու «որդի» է նշանակում, ապա նոր՝ «սերունդ» և այլն):[14] Ժամանակագրության ճշտման առումով ավելի կարևոր են այստեղ հիշատակված անձնավորություններից Դարեհը և Ալեքսանդրը, որոնց շնորհիվ պարզ է դառնում, որ մյուս անձնավորությունների՝ Վաղարշակի, Միհրդատի և նրա կողմնակալ որդու, պատմական նախատիպերը եղել են առաջինների, թեկուզև, կրասեր ժամանակակիցները: Իսկ որ նրանց և Ալեքսանդր Մակեդոնացու հետ հիշատակված Դարեհը Աքեմենյան վերջին

---

[6] *Н. Ломоури, Возникновение древнеиберийского (картлийского) государства, "Проблемы античной культуры", Тб., 1975, стр. 487-488.*

[7] *Г. Меликишвили, К истории древней Грузии, Тб., 1959, стр. 266-271,276-283.*

[8] *И. Болтунова, Возникновение классового общества и государственной власти в Иберии, "Вестник древней истории", 1956, N 2, стр. 28-43.*

[9] *"Всемирная история", т. II, М., 1956, стр. 156-157; "История древнего мира. II. Расцвет древних обществ", М., 1989, стр. 385.*

[10] *Н. Ломоури, նշվ. աշխ., էջ 491-493:*

[11] *История древнего мира", II, стр. 385.*

[12] *Սասպեյրների հնդեվրոպական-հայկական ծագման մասին տե՛ս Ս. Պետրոսյան, Հացազգիների մշակության և պաշտամունքի արտացոլումը Շարայի ավանդազրույցում, «Պատմա-բանասիրական հանդես», 1981, թիվ 3, էջ 187, 203:*

[13] *Մ. Խորենացի, Բ, ը:*

[14] *Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. I, Եր., 1979, էջ 722: Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. II, Եր., 1973, էջ 85:*

արքայից արքան է, կասկած լինել չի կարող:[15] Այս դեպքում Հայաստանի նախկին աքեմենյան տատրապ և նորընծա թագավոր Օրոնտես-Երվանդի կողմից նորաստեղծ հյուսիսային կողմնակալությունում կողմնակալ նշանակված Միհրդատի որդին լինելու է վրացական ավանդությունների Ազոն, որը վրացիներին հայտնի է եղել ոչ թե իր իսկական անվամբ, այլ փաղաքշական մականվամբ: Նրա իսկական անունը, ինչպես պարզվում է Խորենացու հաջորդ վկայություններից, նույնպես *Միհրդատ* է եղել:

Եթե Խորենացին իր *Ա* գրքի *ը* գլխում անանուն է թողնում նորանշանակ Գուգարաց բդեշխին, ապա նույն գրքի *ժա* գլխում նրան ևս *Միհրդատ* է կոչում: Վաղարշակ և Արշակ թագավորներից հետո թագավորած Արտաշեսի առիթով նա գրում է. «Բայց իր Արտաշամա դուստրը կնության է տալիս ոմն Միհրդատի՝ Վրաց մեծ բդեշխի, որ Դարեհի նախաբար Միհրդատի զավակներից էր, որին Ալեքսանդրը նշանակել էր իվերիացիների գերիների վրա, ինչպես առաջ պատմեցինք, և նրան է հավատում հյուսիսային լեռների և Պոնտոսի ծովի կողմնակալությունը»:[16] Այս երկրորդ Միհրդատի որդին ևս, ինչպես կտեսնենք ստորև, Միհրդատ էր կոչվում: Փաստորեն, Մովսես Խորենացուն հայտնի են եղել նույն տոհմի ներկայացուցիչ երեք իրարահաջորդ Միհրդատներ՝ I, II և III: *Միհրդատ* անվան այս տոհմում շատ սիրված լինելը, արդեն որոշակի հիմք է տալիս կապ տեսնելու Դարեհ III-ի Միհրդատ նախաբարի և Պոնտոսի արքայատոհմի միջև, որում նույնպես շատ սիրված էր *Միհրդատ* անունը: Այդ կապն ավելի հստակ է դառնում, երբ ի նկատի ենք առնում հետևյալ երկու հանգամանքները: 1. Միհրդատ II-ին *Վրաց մեծ բդեշխ* կոչելով հանդերձ, Մովսես Խորենացին մատնանշում է, որ նրան էր հանձնված «հյուսիսային լեռների և *Պոնտոսի ծովի կողմնակալությունը*»: 2. Մեկ այլ առիթով մեր պատմահայրը նշում է, որ «երկրորդական գահը» հաջորդ Հայոց թագավոր Տիգրանը «տվել էր իր քրոջ մարդուն՝ Միհրդատին, իսկ Միհրդատի մահից հետո ոչ ոքի չէր տրված, մինչև որ Երվանդը (Երվանդ Վերջին թագավորը) վերադարձրեց Արգամին»:[17] «Երկրորդական գահը» տրվում էր թագավորության մեջ թագավորից հետո երկրորդ ազդեցիկ անձին՝ նրան, ով «երկրորդ թագաորութեանն լինէր»:[18]

Միհրդատներից երրորդին հայոց թագավորը զրկել էր ոչ միայն «երկրորդական գահից», այլև նրա հոր զբաղեցրած «Վրաց մեծ բդեշխի» պաշտոնից: Կարծում ենք, որ դա կարող էր տեղի ունենալ միայն այն բանից հետո, երբ Ազո-Միհրդատ II-ը սպանվել էր Փառնավազի կողմից, իսկ նրա որդի Միհրդատ III-ը թշնամուն դիմադրելու փոխարեն փախել էր Պոնտոս: Ինչպես Մովսես Խորենացին է վկայում, «Այս ժամանակները Տիգրանի մեջ կասկած է ծագում պատանի Միհրդատի մասին, թե իր քեռորդին (քրոջ որդին) չէ, ուստի նրան ոչ մի իշխանություն չի տալիս, ոչ իսկ նրա աշխարհը՝ Վրաստանը: Միհրդատն արհամարհանք կրելով իր քեռի Տիգրանից՝ ապստամբում է (նրանից) և ապավինում է Կեսարին»:[19] Խորենացու ժամանակագրության մեջ այս դեպքերը մոտ են բերված մեր թվագրությանը: Իրականում դրանք վերաբերում են մ.թ.ա. III դարի առաջին տասնամյակներին, երբ Փառնավազի իշխանության գալու հետևանքով Վիրքից փախստական դարձած պատանի Միհրդատը՝ Միհրդատ III-ը, ի վերջո հիմնադրել էր Պոնտոսի անկախ թագավորությունը:

Ստ. Մալխասյանցի կարծիքով, սրա հայր Միհրդատը «Միհրդատ Զ Եվպատորն է, որ կոչվում է նաև Միհրդատ Մեծ, Պոնտոսի թագավորը»:[20] Բայց Միհրդատ VI Եվպատորը (մ.թ.ա. 63-11թթ.) գահակալել է այս իրադարձություններից 200-150 տարի անց: Գ. Սարգսյանը համամիտ լինելով Ստ. Մալխասյանցի հետ, ավելացնում է, որ Կեսարին ապավինած խորենացիական Միհրդատի պատանի որդի Միհրդատն էլ լինելու է Միհրդատ Եվպատորի որդին, որը դիմել էր Հուլիոս Կեսարին:[21] Այս հարցերի

---

[15] Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմ. և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանցի, Եր., 1981, էջ 483, ծան. 125:
[16] Մ. Խորենացի, Բ, ժա:
[17] Նույն տեղում, Բ, խգ:
[18] Նույն տեղում, Բ, ը, Բ, խգ:
[19] Նույն տեղում, Բ, ժը:
[20] Մ. Խորենացի, Հայոց պատմություն, էջ 486, ծան. 138:
[21] М. Хоренаци, История Армении, Перевод с древнеармянского языка, введение и примечания Г. Саркисяна, Ер., 1990, стр. 241, пр. 313, стр. 242, пр. 323.

վերաբերյալ այլ տեսակետ ունեն Ի. Մ. Դյակոնովը, Վ. Դ. Ներոնովան և Ի.-Ս. Սվեն-ցիցկայան: Ըստ նրանց, նախկին աքեմենյան XIX սատրապության տարածքում Պոն-տական թագավորությունն հիմնադրած անձը պարսկական վերջին սատրապներից մեկի որդին էր՝ Միհրդատ II-ը, որը թագավորել է մ.թ.ա. 300-266թթ. միջև:[22] Նախ պոն-տական թագավորությունը այդքան վաղ հիմնադրված լինել չէր կարող, ապա՝ Միհր-դատ II-ը նույնանում է Վիրքում սպանված Ազոյի հետ: Այսուհանդերձ, նրանք ինչ-որ կապ են տեսնում Ազոյի և պոնտական Միհրդատների միջև:[23] Իսկ այդ կապը մարմնա-վորողը եղել է Ազոյի (Միհրդատ II-ի) որդին՝ 266թ. առաջ Վիրքը լքած և Պոնտոսի ան-կախ թագավորությունն հիմնադրած պատանի Միհրդատը (Միհրդատ III-ը): Այս ա-ղբյուրագետների պաշտպանած տեսակետն ավելի մոտ է պատմական իրականությանը, քան մինչ այդ գոյություն ունեցած և պոնտական պաշտոնական տեսակետից եկող վարկածը: Ըստ դրա, Պոնտական թագավորության հիմնադիրն է եղել Քիոս քաղաքի իշխող, Աքեմենյան տոհմից սերած Միհրդատ II (կամ Միհրդատ 1-ը, կամ Միհրդատ III-ը), որը նախ ծառայության մեջ է եղել Մակեդոնիայի թագավոր Անտիգոնոս I-ի (մ. թ.ա. 283-240թթ.) մոտ, ապա՝ մ.թ.ա. 281թ. իրեն հռչակել է անկախ թագավոր:[24]

Պոնտոսի Միհրդատյան արքայատոհմի հիմնադրին պարսիկ են համարում ան-տիկ դարաշրջանի հեղինակներից սկսած մինչև ժամանակակից ուսումնասիրողները՝ բացառությամբ վրաց պատմաբան Գ. Գոզալիշվիլու, որը փորձել է նրան պոնտական-փոքրասիական ծագում վերագրել:[25] Անտիկ շրջանի հեղինակներից Պոլիբիոսը, Դիո-դորոսը և ուրիշներ կարծում են, որ Պոնտոսի Միհրդատյանների հեռավոր նախնին ե-ղել է Աքեմենյան գահի հափշտակիչ մոգ Գաումատային սպանած «Յոթ պարսիկնե-րից» մեկը,[26] իսկ Տակիտոսը, Ապպիանոսը և ուրիշներ նրանց սերած են համարում հենց Աքեմենյաններից:[27] Ե. Ա. Մոլևը այս հաղորդումների միջև հակասություն չի տես-նում, որովհետև Աքեմենյան թագավորների օրինական կանայք լինում էին միայն դա-վադիր «Յոթ պարսիկների» սերունդներից:[28] Հերոդոտոսի վկայությամբ, «Յոթ պար-սիկները» պայմանավորվել էին նաև, որ իրենցից մեկը թագավոր դառնալուց հետո «թագավորը պետք է իր համար կին վերցնի միայն դավակիցներից որևէ մեկի ընտա-նիքից»:[29]

Տարակարծություն գոյություն ունի նաև պոնտական արքայատոհմի այս հեռա-վոր նախնու անվան հարցում: Սովորաբար, նրա անունը չի հիշատակվում, իսկ հիշա-տակողներից Պոլիբիոսը նրան կոչում է *Սազոն*,[30] Ֆլորոսը՝ *Արտաբազես*.[31] Արքայա-տոհմի և Պոնտական թագավորության հիմնադիրի (ենթադրյալ Միհրդատ I-ի՝ մ.թ.ա. 302-266թթ.)[32] հոր անվան հարցում ևս անտիկ դարաշրջանի հեղինակները տարակար-ծիք են. նրան կոչում են Արիոբարզան կամ Միհրդատ:[33] Ստեղծված խառնաշփոթից փորձել է գլուխ հանել Ե. Ա. Մոլևը, բայց նրան ևս դա չի հաջողվել՝ Մովսես Խորենացու վկայություններից անտեղյակ լինելու (կամ դրանք անտեսելու) պատճառով: Իսկ Խո-րենացու հաղորդած տեղեկությունները, ինչպես տեսանք, հնարավորություն տվեցին պարզելու, որ Փառնավազի Վիրքում թագավոր դառնալուց հետո այնտեղից փախված Միհրդատ III-ը՝ սպանված Միհրդատ II-ի պատանի որդին և Դարեհ III-ի զորավար Միհրդատի (Միհրդատ I) թոռը, հաստատվել էր Պոնտոսում և հիմնադիրը դարձել պոն-

[22] *История древнего мира, II, стр. 384.*
[23] *Նույն տեղում, էջ 385:*
[24] *О. Савостьянова, Понтийское царство, "Советская историческая энциклопедия", т. 11, М., 1968, стр. 405.*
[25] *Г. Гозалишвили, Митридат Понтийский, Тб., 1962, стр. 235.*
[26] *Polyb, V, 43, 2; Diodor. XIX, 40.*
[27] *Tacit., Annal., XII, 18; Appian., Mithr., IX, 112.*
[28] *Е. Молев, К вопросу о происхождении династии понтийских Митридатидов, "Вестник древней истории", 1983, N 4, стр. 134-135.*
[29] *Herod, III, 84 (Հերոդոտոս, էջ 194):*
[30] *Polyb, V, 43, 2.*
[31] *Flor, XL, 3, 5.*
[32] *Հ. Մանանդյան, Տիգրան II-ը և Հռոմը, Եր., 1940, էջ 17-18: Նույնի՝ Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. I, էջ 98:*
[33] *Е. Молев, նշվ. աշխ., էջ 131, 135:*

տական Միհրդատյան արքայատոհմի ու Պոնտոսի անկախ թագավորության: Նրա պապ Միհրդատ I-ից էր սերում նաև Գուգարաց բդեշխների տոհմը:

О РОДСТВЕ ДИНАСТИЙ ПОНТИЙСКИХ ЦАРЕЙ И ГУГАРКСКИХ БДЕШХОВ

Резюме *Л. Петросян*

После крушения Ахеменидской державы, районы Восточнопонтийских гор и северного Закавказья с Дарьялским проходом находились под контролем независимого армянского царства Ервандуниев (Ервандидов, Оронтидов). Царь Ерванд, один из исторических прототипов легендарного царя Валаршака (у Мовсеса Хоренаци), организовал там наместничество, во главе которого стал Митридат – сын одноименного военачальника последнего Ахеменида - Дария III.

По-нашему мнению, именно этот Митридат в "Картлис цховреба" ("История Грузии") был ласкательно назван Азо. Он был низложен и убит основателем независимого грузинского царства (Картли, Иберия) Фарнавазом в 70-ых годах III в. до н. э. Сын этого (второго) Митридата, тоже Митридат, бежал в горные районы Понта, где впоследствии стал основателем Понтийского царства Митридатидов.

Первый из упомянутых Митридатов, по Мовсесу Хоренаци, был предком не только понтийских царей, но и гугаркских (гогаренских) бдешхов.